ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 43-Ա

## ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2015 Թ. ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԷ

Հաստատել Մարմարաշեն համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը

1.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2016 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՄԱՐՄԱՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐՄԱՐԻԿ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2016 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ. ԲՅՈՒՋԵԻ <<ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻՑ>> ԳՅՈՒՂԱՊԵՏԻՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
2. ԱՐՈՅԱՆ ՂԱԶԱՐ
3. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 44-Ն

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի՝ շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
Հիմնական օբեկտների համար՝
ա.մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար 15000 դրամ:
բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբեկտների համար՝
բա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ
բբ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ
բգ. 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ
բդ.3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ
դ. 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ավելացնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման, կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության դեպքում տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1. ոգելից խմիչքի վաճառքի թույտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1000 դրամ:
2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝
ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ, 1 քմ-ի համար:
բ. հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
գ.խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ
գա.համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ
ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ
6. Համայնքի տարածքում ՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ
գ. բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ
դ. խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ
ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ
զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ
բ. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակություն մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ
գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ
ե. դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ
9. Համայնքի արխիվից փաստաթղթի պատճենները և կրկօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար և տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:
10.1 Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50,000 դրամ:
11-1. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը համայնքում կիրառել 0,5 գործակցով:
12. Համայնքի տարածքում շինարարության, շինության արտաքին տեսքը փոխող, վերակառուցման աշխատանքների հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:
13. ՏԻՄ տնօրինության տակ գտնվող հողերի հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2500 դրամ:
14. ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 3000 դրամ:
15. Աղբահանության վճար սահմանել՝ 0 դրամ

Կողմ -6

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

2. ԱՐՈՅԱՆ ՂԱԶԱՐ

3. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ

6. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 45-Ն

## ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2016 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մարմարաշեն համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2015 թվականի հուլիսի 20-ի թիվ 26-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
2. ԱՐՈՅԱՆ ՂԱԶԱՐ
3. ԽՍԱԳՈՒԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված թիվ 1

Մարմարաշենի համայնքի ավագանու

2015 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 45-Ն որոշման

# ՄԱՐՄԱՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/2016 ԹՎԱԿԱՆ/

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 19
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնայինդրույքաչափը |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 300000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 130000 |
| Համայնքայինծառայությանպաշտոններ | | |
| Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար(1.2-1) | 1 | 240000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ(2.3-1) | 1 | 239000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-1) (3.1-2) | 2 | 130000<br>143000 |
| Գյուղապետարանիաշխատակազմիառաջին կարգիմասնագետ (3.2-1) | 1 | 129000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ Կարգի մասնագետ (3.3-2) | 1 | 120000 |
| Տեխսպասարկմանանձնակազմ | | |
| Համակարգչիօպերատոր | 1 | 100000 |
| Էլեկտրիկ | 1 | 78000 |
| Պահակ | 2 | 72752 |
| Հավաքարար | 1 | 72752 |
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | 72752 |
| Բանվոր | 1 | 72752 |

## *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | *Պաշտոնային դրույքաչափերը* |
|---|---|---|
| *Տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցներ* | | |
| Գործավար | 1 | 100000 |
| Գրադարանավար | 1 | 78000 |
| Մարզիչ | 1 | 72752 |
| Պարուսույց | 1 | 78000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 46-Ն

## ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐՄԱՐԻԿ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2016 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մարմարաշեն համայնքի <<Մարմարիկ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափը համաձայն թիվ 2 հավելվածի :

2.Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2015 թվականի հուլիսի 20-ի թիվ 27-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՀԻ
2. ԱՌՈՅԱՆ ՂԱԶԱՐ
3. ԽՍԱԳՈՒԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված թիվ 2
Մարմարաշեն համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 46 -Ն որոշման

Մարմարաշեն համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության 2016թ հաստիքացուցակը 4 խմբի համար 8 ժամյա աշխատանքի դեպքում

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 165000 |
| 2 | Դաստիարակ | 1,12 | 156637 |
| 3 | Դաստիարակ | 1,12 | 156637 |
| 4 | Դաստիարակ | 1,12 | 156637 |
| 5 | Դաստիարակ | 1,12 | 146054 |
| 6 | Դաստիարակի օգնական | 1 | 92593 |
| 7 | Դաստիարակի օգնական | 1 | 92593 |
| 8 | Դաստիարակի օգնական | 1 | 99150 |
| 9 | Դաստիարակի օգնական | 1 | 99150 |
| 10 | Երաժշտական դաստիարակ | 1 | 146054 |
| 11 | Հաշվապահ | 1 | 146054 |
| 12 | Հաշվետար գանձապահ | 0,5 | 72752 |
| 13 | Տնտեսվար | 1 | 92600 |
| 14 | Գործավար | 0,5 | 77904 |
| 15 | Խոհարար | 1 | 106000 |
| 16 | Խոհարարի օգնական | 1 | 82010 |
| 17 | Լվացքարար | 1 | 72752 |
| 18 | Պահակ | 1 | 72752 |
| 19 | Հնոցապան | 1 | 72752 |
| 20 | Օժանդակ բանվոր | 0,5 | 72752 |
| 21 | Բուժքույր | 1 | 92593 |

Համայնքի ղեկավար՝ Է.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 47-Ա

## ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ. ԲՅՈՒՋԵԻ <<ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻՑ>> ԳՅՈՒՂԱՊԵՏԻՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով ավագանու 19.12.2014թ.-ի թիվ 44-Ն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Մարմարաշեն համայնքի 2015թ. բյուջեի <<Պարգևատրման ֆոնդից>> գյուղապետին տալ պարգևատրություն մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
2. ԱՐՈՅԱՆ ՂԱԶԱՐ
3. ԽՍԱԳՈՒԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ